— ...

Հայաստանում հացը ամէն օր պէտք է թրջել: Լաւաշը կարծր է հին մագաղաթի նման եւ դրուելիք գիրքը տխուր:

Դպրոց, համալսարան, յօդուածներ, իտալական եւ սպանիական անթել հեռագիրների թարգմանութիւն, ժողովներ, ժողովներ: Գումար = թշուառութիւն: Լուրիա, Վանայ ժաժիկ եւ թուզով թէյ:

Ամենէն սոսկալին բարոյական եւ մտաւորական ճնշումն է, ուսերիդ վրայ բեռնուած կապարը, ուղեղիդ մէջ մխրճուած սուրերը:

Դպրոցում՝ չուարած ուսուցիչներ եւ վայրենացած աշակերտներ:

Համալսարանում՝ կոմրջիջի կատաղած ոջիլները:

Քաղաքում՝ աչքերի եռեւ մրափող կատուն, սրտերի տակ կուչ եկած ոխը, կասկածը, նախանձը, եւ առ երես դառն ժպիտները:

Ձանձրոյթ...

* * *

Հոկտեմբեր.—

Ի՞նչ երկայն է աշունը Երեւանում:

Մոդակա՛ն աշուն. ամէն կողմից բոց է թափում: Արարատեան դաշտը մելամաղձոտ է եւ դեղին: Օդը մարգարիտէ է եւ լոյսերը սըրսրփուն:

Աշունը այստեղ հոգեկան զարթօնքի մի ձեւ է: Գլուխը վար դցած, ոտքերը քաշքշող եւ թեւի տակ ջուրթակը սեղմող պանդուխտը չէ, որ անցնում է Արարատեան դաշտից, այլ դէպի վեր ցցուած բոցանման վարսերով, լուսավէտ մեծ աչքերով եւ թեթեւ ոտքերով մի քերովբէ, որ փչում է երկայն, ոսկէ մի փողի մէջ եւ երկնում պսպղուն տերեւաթափի լեգենդան:

Արարատը ձիւնների տակ երգեհոնի նման հնչուն է:

Ամէն ինչ երգ է...

— ...

Վերջապէս պատահեց այն, ինչ որ պիտի պատահէր:

Երեկոյեան տուն վերադարձայ եւ ամբողջ ընտանիքը սարսափի մէջ գտայ: Իմ բացակայութեան ժամանակ միլիցիականների մի խումբ, զինուած, խուժել են ներս, խոհանոցի վարագոյրը պոկել եւ սպառնական բառերով դուրս եկել: Նրանք յայտարարել են, որ դա պարլամենտի նախկին դրօշակն է եւ որ, եթէ տանը լինէի, ինձ պիտի ձերբակալէին:

Կանայք — խելացինե՞ր — մի մի անկիւնում կուչ են եկել եւ դողալով աչքերիս մէջ են նայում: Սաթոյի իգդիրցիները դաւաճանեցին... Երախաները խեղճ խեղճ նստել են եւ այլեւս Ղարսը չեն ուզում ետ առնել:

Դու հիմա եկ էլը ցեխից հանիր:

Գոյների տեղը փոխել էինք, բարեբախտաբար: Անմիջապէս բաց եմ անում Լառուսի փոքրիկ բառարանը եւ զանազան երկրների դըրօշակների ցանկում փնտռում եմ մէկը, որ նմանի: Հոլլանդականը...

Քիչ յետոյ՝ «նաչալնիկը կանչում ա»...

Կեղտոտ մի սենեակ, սեղան, կոտրած մի աթոռ: Նաչալնիկը, երիտասարդ մի տղայ, աչքերը չռել է եւ աչխատում է դէմքին խըստութիւն տալ:

— Դուք,— ասում է,— ձեր տան մէջ կախել էիք Պարլամենտի դրօշակը...

— Ի՞նչ պարլամենտ:

— Իբր թէ չգիտէք... Դաշնակցական Պարլամենտի դրօշակը:

— Դուք պարզապէս տգէտ մի մարդ էք... Եւ նախ ի՞նչ իրաւունք ունէիք ձեր մարդիկը իմ բնակարանս ղրկել եւ առանց իմ իրաւունքի ներս մտնել եւ յետոյ այս դրօշակը հոլլանդական դրօշակ է, որ բերել եմ Ամստերդամից: Եթէ չէք հաւատում, ահա նայեցէք բառարանը:

— Ես բառարան մառարան չեմ իմանում եւ վստահ գիտեմ, որ դա Պարլամենտի դրօշակն է:

— Դէ գիտում էք՝ գիտցէք:

— Ձեր գործը, դրօշակի հետ, կը դնայ Ձեկա:

— Լաւ:

— Կը հասկանաք, որ բանուորա-գիւղացիութեան ըէժիմի հետ խաղալ չի կարելի:

— ...

— Կարող էի ձեզ բանտարկել, բայց ուզում եմ սպասել հրամանի:

— Ցը...

Բարեկամներս բացատրում են.—

— Քեզ որոշել են հուպ տալ: Երեւի, մի

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան